

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Մայիսի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի առաջին տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է, եղել նորմայից 2-3 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 10-ին. Տավուշում +26…+28^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +20…+22^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +27…+29^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +28…+31^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +22…+24^{0}C, Շիրակում՝ +19…+24^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +19…+24^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +22…+24^{0}C, Գեղարքունիքում՝ +20…+22^{0}C (Սեմյոնովկա՝ 16^{0}C), Լոռիում՝ +23…+25^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +28…+30^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +18…+20^{0}C, նախալեռներում՝ +22…+28^{0}C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 7-ին. Շիրակում՝ 0…+4^{0}C (Աշոցք՝ -2^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ -1…+4^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +3…+5^{0}C, Տավուշում +4…+8^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +1…+3^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +6…+8^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +7…+9^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +1…+4^{0}C, Գեղարքունիքում՝ 0…+4^{0}C, Լոռիում՝ 0…+4^{0}C, Արմավիրում՝ +5…+7^{0}C, Արարատում՝ +7…+9^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 0…-1^{0}C, նախալեռներում՝ +6…+8^{0}C:

Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 19-61մմ (47-205%), Լոռիում՝ 21-50մմ (63-114%), Տավուշում՝ 26-29մմ (94-102%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 19-24մմ (59-74%), նախալեռներում՝ 12-35մմ (42-117%), Գեղարքունիքում՝ 3-25մմ (14-90%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 21-32մմ (60-84%), նախալեռներում՝ 23մմ (95%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 43մմ (130%), նախալեռներում՝ 26մմ (146%), Արմավիրում՝ 7-12մմ (32-67), Արարատում՝ 8-11մմ - 40-75% (Արտաշատ՝ 74մմ- 517%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 18-40մմ (113-148%), նախալեռներում՝ 25-39մմ (70-156%):

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ





















Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում հովտային և նախալեռնային շրջաններում շարունակվել է կորիզավոր պտղատուների աճը, լեռնային շրջաններում՝ հնդավորների ծաղկումը:

Արարատյան դաշտում շարունակվել է բանաջարանոցային մշակաբույսերի սածիլումը, տեղ-տեղ առաջացել են լոլիկի և սմբուկի կողային ընձյուղները:

Նախալեռնային շրջաններում դիտվել է կարտոֆիլի կողային ընձյուղները, լեռնային շրջաններում՝ ծիլերը:

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենը գտնվել է ցողունակալման և հանգուցային արմատների առաջացման փուլերում:

Ժամանակ առ ժամանակ դիտված տեղումները դժվարեցրել են դաշտային աշխատանքների իրականացումը: Արարատյան դաշտում դիտված կարկուտը որոշ չափով վնասել է պտղատուներին և բանջարանոցային մշակաբույսերին: